ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Երկրար. և տշխարհագր. գիտ. XV, № 2, 1962 Геологич. и географич. науки

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ՊԵՏՐՈՍ ՂԱՄԲԱՐՅԱՆ

(«Անվանի հայ երկրաբաններ» շարքից)

Հայաստանի երկրաբանական ծառայության հնագույն աշխատող, անվանի երկրաբան Պետրոս Ղամբարյանը ծնվել է 1899 թվականին՝ Թիֆլիսում, ծառայողի ընտանիքում։ Նրա հայրը իրավունքի մագիստրոս էր, իսկ մայրը՝ դաշնակահար։

Նախնական կրթությունը Պետրոսը հիմնականում ստանում է տանը իր առաջին ուսուցիչների՝ ծնողների ղեկավարությամբ, իսկ քննությունները հանձնում է էքստերն կարգով, միշտ ստանալով բարձր գնահատականներ։



Պետրոսը մանուկ հասակից հանդես է բերում բացառիկ սեր դեպի նկարչությունը։ Արտակարգ ընդունակ և մեծ շնորհքի տեր պատանին նկարում է բազմաթիվ կտավներ, որոնցից շատերը ցուցադրվում են Թիֆլիսում կազմակերպված նկարիչների ցուցահանդեսներում[1]։

---

1 *Այդ կտավների մի որոշ մասը ներկայումս գտնվում է նրա որդու, ՍՍՌ Միության Գիտությունների ակադեմիայի Կենդանաբանության ինստիտուտի (Լենինգրադ) ավագ գիտական աշխատող Պ. Պ. Ղամբարյանի մոտ։*

Յուղանկարչությունից բացի Պետրոսը զբաղվում է նաև փորագրությամբ։ Փայտի վրա նրա փորագրած լավագույն գործերից մեկը ձեռք է բերում Մոսկվայի նախկին Ռումյանցևի թանգարանը, իսկ այդ աշխատանքի լուսանկարը տպագրվում է անգլիական «The Studio» ամսագրում։

Ղամբարյանը մեծ հետաքրքրություն է հանդես բերում նաև դեպի որմնանկարչությունը։ Այդ բնագավառում կատարած երկարատև աշխատանքի ու որոնումների արդյունքները դրսևորվում են նրա «Ջիբուխլի գյուղը Սևանա լճի ափին» խոշոր որմնանկարում, որը նա նկարել է Թիֆլիսի Զերժինսկու փողոցի (Սոլոլակ) շենքերից մեկի պատի վրա (տարիների ընթացքում շենքի վերանորոգումների հետևանքով որմնանկարը ներկայումս չի պահպանվել)։

1920 թվականին Պետրոս Ղամբարյանը մեկնում է արտասահման բարձրագույն կրթություն ստանալու։ Սակայն, նյութական կարիքը հարկադրում է նրան ժամանակավորապես հրաժարվել իր մտադրությունից և օրվա հաց ճարելու համար մտնել աշխատանքի։ 1920—1922 թվականների ընթացքում Պ. Ղամբարյանը ապրում է Իտալիայում և աշխատում է երկրի մի քանի հանրավայրերում որպես բանվոր։

1922 թվականին Պ. Ղամբարյանը գալիս է Փարիզ, այստեղ նա թողնում է նկարչությունը և տարվում է երկրաբանությամբ։ Նույն թվականին նա ընդունվում է Սորբոնի համալսարանը, ուր մի քանի տարի շարունակ մեծ սիրով ու նվիրվածությամբ լսում է երկրաբանական ցիկլի առարկաների լրիվ դասընթացը և միաժամանակ աշխատում է Բնա-պատմական թանգարանում ականավոր պրոֆեսորներ Մոգենի և Լաքրուաի ձեռքի տակ։ Երկրաբանական տեսական ու գործնական գիտելիքների տիրապետման գործում Պետրոսին մեծ օգնություն է ցույց տալիս նաև նշանավոր պրոֆ. Պիեր Բոնեն, որը նախկինում աշխատել էր Հայաստանում և բավական ծանոթ էր Հայաստանի երկրաբանական կառուցվածքի հետ։

1927 թվականին Պ. Ղամբարյանը ավարտում է համալսարանը և շարունակում է իր աշխատանքը Բնա-պատմական թանգարանում։ Նույն թվականին նա ընտրվում է Ֆրանսիական հանքաբանական ընկերության իսկական անդամ։ Պրոֆ. Մոգենը բարձր գնահատելով Ղամբարյանի գիտա-մանկավարժական աշխատանքի համար ունեցած արտակարգ ընդունակությունները, առաջարկում է նրան որպես ասիստենտ աշխատել իր մոտ։ Սակայն երիտասարդ ու շատ համեստ երկրաբանին չեն դրավում ոչ Փարիզի շքեղությունն ու գեղեցկությունը և ոչ էլ այնտեղ սպասվող ապագա վաստակը։ Պետրոսին հզոր մագնիսի ուժով ձգում են իր հեռավոր հայրենիքը և այնքան հարազատ ժողովուրդը, նրան առաջնորդում են իր հայրենիքի և ժողովրդի բարօրության համար ազնվաբար ու նվիրված ծառայելու պարտքի հասուցման վեհ գաղափարները։

1927 թվականին Պետրոս Ղամբարյանը թողնում է Փարիզը, գալիս է Սովետական Հայաստան ու աշխատանքի է հրավիրվում Երևանի Պետական համալսարանում։ Այստեղ նա աշխատում է սկզբում որպես քիմիական (որակական անալիզի) լաբորատորիայի վարիչ, իսկ այնուհետև երկրաբանական առարկաների (բյուրեղագիտություն, հանքաբանություն և քարագիտություն) դասախոս։ Շուտով նա ստանում է դոցենտի կոչում, իսկ 1930 թվականին, երբ Երևանի Պետական համալսարանի բազայի վրա ստեղծվում է Պոլիտեխնիկա-

կան ինստիտուտը, Պ. Ղամբարյանը դոցենտի պաշտոնով փոխադրվում է այդ նորաստեղծ բարձրագույն ուսումնական հաստատությունը։

Ինչպես համալսարանում, այնպես էլ Պոլիտեխնիկական ինստիտուտում Պ. Ղամբարյանը հատուկ ուշադրություն է դարձնում երկրաբանական առարկաների դասավանդման վրա և ականավոր երկրաբան պրոֆ. Տիգրան Ջրբաշյանի հետ միասին, մեծ աշխատանք է տանում Քիմիական ֆակուլտետում երկրաբանական թեքումով ազգային մասնագիտական կադրեր պատրաստելու ուղղությամբ[1]։ Ուշագրավ է, որ այդ կադրերի առաջնեկը հանդիսացել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտի պետրոգրաֆիայի բաժնի վարիչ Գևորգ Բաղդասարյանը, որը 1929 թվականից մինչև Պետրոս Ղամբարյանի ողբերգական մահը աշխատել է նրա մոտ և իր առաջին երկրաբանական մկրտությունը ստացել է իր տաղանդավոր ուսուցչի արշավախմբերում։

Մանկավարժական աշխատանքին զուգընթաց Պ. Ղամբարյանը 1928 թվականից սկսած մինչև իր կյանքի վերջը տանում է նաև գիտա-հետազոտական աշխատանք, պաշտոնավարելով ռեսպուբլիկայի երկրաբանական ծառայության սկզբնական օջախ հանդիսացող Երկրաբանական-հետազոտական վարչությունում։

1928—1933 թվականների ընթացքում նա հետազոտում է Մերձերևանյան (լայն առումով) և Հրազդանի շրջանները, ուսումնասիրելով այդ շրջանների երկրաբանական կառուցվածքը և օգտակար հանածոները (դիատոմիտ, մարմար, սրաքար, տրաս, կավ և այլն)։ Պետրոս Ղամբարյանի կատարած երկրաբանական-հետախուզական աշխատանքների արդյունքները ամփոփված են հրատարակված երկու աշխատություններում և երեք տասնյակից անցնող գիտա-տեխնիկական ձեռագիր հաշվետվություններում, որոնք պահվում են Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Երկրաբանության և ընդերքի պահպանման վարչության ֆոնդերում։

Մի փոքր ավելի մանրամասն կանգ առնենք նրա կատարած գիտա-հետազոտական աշխատանքների վրա։

1928 թվականին Պ. Ղամբարյանը հետազոտում է Աբովյանի շրջանի Զորաղբյուր գյուղի շրջակայքի տրասները, որպես հիդրավլիկ ավելցուկ օգտագործման համար։ Ահա այդ ժամանակ էլ, դաշտային աշխատանքի հենց առաջին տարում Պ. Ղամբարյանը իրեն դրսևորում է որպես տաղանդավոր և փորձված հետազոտողի, որը անցել է տեսական ու գործնական աշխատանքի ինքնուրույն, հիանալի դպրոց և հեշտությամբ կողմնորոշվում է ամենաբարդ երկրաբանական պայմաններում։ Այդ է հաստատում նաև 1929 թ. նրա ներկայացրած «Թեջրաբակի տրասները» հաշվետվությունը, որը ինչպես իր բովանդակությամբ, այնպես էլ ձևավորմամբ ներկայացնում է միանգամայն կատարյալ գիտա-տեխնիկական ավարտված, լավագույն գործ։

1929 թվականին Պետրոս Ղամբարյանը մասնակցում է Սովետական Միության Գիտությունների ակադեմիայի Անդրկովկասյան արշավախմբի աշխատանքներին իբրև Երևանի խմբի պետ։ Նա հետազոտում է Հրազդան գետի

---

[1] Երևանի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը բացվել է ավելի ուշ, 1934 թվականին, պրոֆ. Տ. Ջրբաշյանի և համալսարանի ռեկտոր Տ. Մուշեղյանի նախաձեռնությամբ։

ստորին հոսանքի երկրաբանական կառուցվածքը և կազմում է այդ տեղամասի երկրաբանական քարտեզը։ Այդ ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփված են նրա բավական ստվար աշխատությունում[1], որն ունի լեռնագրություն, երկրաբանություն, քարագիտություն, օգտակար հանածոներ գլուխները, երկրաբանա-պետրոգրաֆիական քարտեզ և բազմաթիվ լուսանկարներ ու ապարների քիմիական կազմի աղյուսակներ։ Աշխատության հատկապես արժեքավոր մասը հանդիսանում է հրաբխային ապարների նկարագրությունը, նրանց փոխհարաբերության ու հասակի հարցերի որոշումը, ինչպես նաև Շորաղբյուրի նստվածքային շերտախմբի և պարունակող ֆաունայի բնութագրումը։

1930 թվականին Պ. Ղամբարյանը ուսումնասիրում և հետազոտում է Աբովյանի շրջանի Նուռնուսի դիատոմիտի հանքավայրը, որը շուտով հանձնվում է շահագործման։ Այդ հանքավայրին է նվիրված նրա երկրորդ տպագիր աշխատությունը[2], որը մանրամասն կերպով տալիս է Նուռնուսի տեղամասի երկրաբանական կառուցվածքը, որոնողա-հետախուզական աշխատանքների նկարագիրը և դիատոմիտի ֆիզիկա-քիմիական հատկությունների ու կիրառման բնութագիրը։ Աշխատության մեջ բերված են նաև հանքավայրի երկրաբանական քարտեզը, կտրվածքներ և մի շարք լուսանկարներ։

Այդ նույն թվականին Պ. Ղամբարյանը աշխատում է մարմարների գծով, հետազոտում է Հրազդանի շրջանի Արզականի և Աղվերանի հանքավայրերը, տալիս է նրանց պետրոգրաֆիական նկարագրությունը, մարմարների տեղադրման պայմանների ու հատկությունների բնութագիրը և հետագա որոնողա-հետախուզական աշխատանքների ուղությունը[3]։

1931 թվականին Ղամբարյանը որոնողա-հետախուզական աշխատանքներ է կատարում Փարաքար, Զորաղբյուր և Փարբի գյուղերի շրջակայքում կավի («գիլ») և դիատոմիտի նոր հանքավայրեր հայտնաբերելու ուղղությամբ։

1932 թվականին նա երկրաբանական աշխատանքներ է տանում Արտաշատի և Վեդու շրջաններում և Ջաջուռի ածխի հանքավայրում։

Պետրոս Ղամբարյանը գիտա-հետազոտական աշխատանքներ է կատարել նաև ինժեներական երկրաբանության բնագավառում։ Նա Քանաքեռգէսի շինարարության կապակցությամբ ուսումնասիրել է գրունտների հատկությունները, տվել է մի քանի եզրակացություններ հիդրո-տեխնիկական և այլ խոշոր կառույցների երկրաբանական պայմանների մասին։

Ղամբարյանի գրչին են պատկանում նաև մի շարք ձեռագիր աշխատություններ և հաշվետվություններ, որոնք նվիրված են Երևանի բազալտների էլեկտրաձուլման և վերաբյուրեղացման, ռեսպուբլիկայի հնարավոր նավթաբերության հարցերին։

---

[1] «Геолого-петрографический очерк района средней Занги». Бассейн реки Занги, часть II. Геолого-гидрогеологические очерки. Труды Совета по изучению природных ресурсов (СОПС). Серия Закавказская, вып. 10. Издательство АН СССР, Ленинград, 1934.

[2] «Нурнусское месторождение диатомита», Сборник научно-исследовательских трудов НИС-а Уполн. НКТП при СНК ССР Армении, № 1. Отв. редактор гор. инж. А. С. Зорабян. Ереван, 1934.

[3] Տե՛ս «Арзаканское месторождение мрамора» հաշվետվություն։

Ինչպես երևում է Պ. Ղամբարյանի կատարած գիտա-հետազոտական աշխատանքների համառոտակի շարադրումից, նա ընդգրկել է երկրաբանական գիտությունների լայն շրջանակներ, հավասարաչափ կերպով զբաղվել է և հանույթով, և օգտակար հանածոների որոնողա-հետախուզական աշխատանքներով։ Ղամբարյանն ուներ տեսական ու գործնական գիտելիքների մեծ պատրաստականություն և դաշտային հետազոտման աշխատանքների ինքնատիպ մեթոդներ. նա ազատ կերպով տիրապետում էր եվրոպական մի քանի լեզուների (ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն ու անգլերեն) և քաջ գիտակ էր համաշխարհային մասնագիտական գրականությանը։

Պետրոս Ղամբարյանը զոհվեց 1934 թվականի փետրվարի 8-ին, ինքնաթիռի աղետի ժամանակ, երբ նա Բաքվից վերադառնում է Թիֆլիս, ուր մեկնել էր պրոֆ. Վ. Վ. Բոգաչևի մոտ կոնսուլտացիաներ ստանալու և մի քանի տարիների ընթացքում հավաքած հնէաբանական նյութեր մշակելու համար։

Պ. Ղամբարյանի անակնկալ մահը մեծ վիշտ պատճառեց ոչ միայն ռեսպուբլիկայի լեռնա-հանքային արդյունաբերության աշխատողներին, այլև ինտելիգենցիայի լայն շրջանների մարդկանց։ Լեռնային ինժեներ Ա. Զորաբյանի խմբագրությամբ լույս տեսած «Գիտա-հետազոտական աշխատությունների ժողովածուի» անդրանիկ համարում[1] Պետրոս Ղամբարյանի մահվան առթիվ տպագրվում են դամբանական և նրա «Նուռնուսի դիատոմիտի հանքավայրը» աշխատությունը։

Շատ քիչ ապրեց, ընդամենը երեսունհինգ տարի, հազիվ կես կյանք և շատ-շատ քիչ, ընդամենը հինգ-վեց տարի, երկրաբանական ակնթարթ ստեղծագործեց Պ. Ղամբարյանը, սակայն մարդու կյանքի արժեքը չափվում է ոչ թե ապրած տարիների քանակով, այլ տվածով և այդ տեսակետից էլ նա շատ տվեց և քիչ ստացավ։

Ղամբարյանը այն հազվադեպ, բնածին և մեծ տաղանդի տեր մարդկանցից էր, որն իր գործունեության հենց առաջին տարիներին ճանաչվեց և սիրվեց բոլորի կողմից իբրև իր գործին մինչև վերջ նվիրված, բյուրեղյա, մաքուր, ազնիվ, արտակարգ պարզ ու հասարակ մարդ, մեծ քաղաքացի և հայրենասեր։

Պետրոս Ղամբարյանը մեռավ իր ստեղծագործական ուժերի բուռն ծաղկման շրջանում, երբ Հայաստանում նոր էր ծավալվում երկրաբանական հանույթի և օգտակար հանածոների որոնողա-հետախուզական աշխատանքները և նա ամենայն իրավմամբ իր ժամանակակիցների հետ (Հովհ. Կարապետյան, Տ. Ջրբաշյան, Ա. Զորաբյան և ուրիշներ) հանդիսացավ երկրաբանության հետագա առատ բերքի առաջին սերմնացանը։

---

1 Տե՛ս «Сборник научно-исследовательских трудов», № 1.